

Լիանա Մալխասյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Քանալի բառեր - իրավունքի գերակայություն, իրավունքի գերակայության սկզբունք, իրավական պետություն, օրենքի գերակայություն, ժողովրդավարական իշխանություն, մարդու իրավունքներ:

Իրավունքի սկզբունքների համակարգում իրավունքի գերակայության սկզբունքի վերաբերյալ մինչ օրս գոյություն չունի հստակ մոտեցում, չնայած այն հազնամաքին, որ իրավունքի գերակայության սկզբունքը հատուկ իրավական սկզբունքներից մեկն է, այնուամենայնիվ, այս հասկացության վերաբերյալ դեռևս ձևավորված չէ համընդհանուր մոտեցում: Իրավունքի գերակայության սկզբունքի հասկացության վերաբերյալ իրավագետների մոտեցումները ընդհանրացնելու և դրա բովանդակային նշանակությունը բացահայտելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել «իրավունքի գերակայություն» հասկացությանը և հայեցակարգին վերաբերվող մոտեցումները: «Իրավունքի գերակայություն» հասկացության բովանդակային նշանակությունը քննարկվել է դարերի ընթացքում բազմաթիվ իրավագետների կողմից, սակայն մինչ օրս գոյություն չունի իրավաբանների լայն շրջանակների կողմից ընդունված փոխհամաձայնեցված մոտեցում: Իրավագետների շրջանում վիճելի է ոչ միայն «իրավունքի գերակայություն» հասկացության բովանդակային նշանակությունը, այլ նաև հենց տերմինի ընկալումը շատ հաճախ առաջացնում է տեսակետների բախում: Օրինակ՝ ռոմանո-գերմանական իրավական համակարգում որպես անգլո-սաքսոնական իրավունքի գերակայության տեսությանը (հայեցակարգին կամ սկզբունքին) համարժեք օգտագործվում է իրավական պետություն կատեգորիան: «Իրավունքի գերակայություն» (Rule of law) տերմինը անգլո-սաքսոնական իրավական համակարգում չի դիտարկվում որպես "Rechtsstaat", "Estado de Direito" կամ "Etat de droit" տերմինների հավասարազոր հոմանիշ, քանի որ վերոթվարկված երեք տերմինները անգլո-սաքսոնական համակարգում ընկալվում և մեկնաբանվում են որպես «իրավական պետություն» հասկացությանը հավասարազոր հոմանիշներ: Չնայած այս հանգամանքին՝ Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված բազմաթիվ իրավական ակտերում վերոթվարկված հասկացությունները ամրագրվում են (Rule of law) տերմինին համարժեք¹:

«Իրավունքի գերակայություն» հասկացության վերաբերյալ արդի մոտեցումները շարադրված են բրիտանացի իրավագետ, պրոֆեսոր Ա. Վ. Ղայսիի աշխատությունում²:

Իրավունքի գերակայություն հասկացության ձևակերպման և դրա բաղադրիչների սահմանման վերաբերյալ մինչ օրս էլ անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգերի ներկայացուցիչների միջև փոխհամաձայնություն չի կայացել, փոխարենը և՛ իրավունքի գերակայության հասկացության, և՛ դրա բաղադրիչների մասին հստակ մոտեցումները շարադրված են Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 2008 թ. նոյեմբերի 21-ի ՍՄ(2008)170 հանձնարարականում³, ՄԱԿ-ի՝ 2012 թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներում⁴, Եվրախորհրդի՝ Վենետիկի հանձնաժողովի 2011 թ. ապրիլի

¹ Տե՛ս "Совет Европы и верховенство права" – Обзор - СМ(2008)170, 21 ноября 2008 год.

² Տե՛ս Իրավունքի գերակայության ժամանակակից հայեցակարգի հիմքերը մշակել է Ա. Ղայսին իր 1885 թ. Հրապարակած «Սահմանադրական իրավունքի հետազոտման ներածություն» հիմնարար աշխատությունում: Տե՛ս ռուսերեն հրատարակությունը Дэйси А. Основы государственного права Англии (Introduction to the study of the law of the constitution). Пер. О. В. Полтороцкой, под ред. П. Г. Виноградова. С.-Петербург, 1891):

³ Տե՛ս «The Council of Europe and the Rule of Law» - An Overview СМ(2008)170 21 նոյեմբերի 2008 թ.:

⁴ Տե՛ս առավել մանրամասն ՄԱԿ-ի՝ 2012թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներում <https://www.un.org/ruleoflaw/high-level-meeting-on-the-rule-of-law-2012/>

4-ի CDL-AD(2011)003rev. գեկույցում¹: Իրավունքի գերակայության ժամանակակից ընկալումների դրսևորումներից է նաև ՄԱԿ-ի նախկին նախագահ Քոֆի Անանի՝ գեկույցում տրված մեկնաբանությունները²: Ըստ Քոֆի Անանի՝ «իրավունքի գերակայությունը կառավարման այնպիսի սկզբունքներից մեկն է, որի համաձայն բոլոր անհատները և՛ պետական, և՛ մասնավոր կազմակերպությունները և մարմինները, այդ թվում նաև պետությունը պատասխանատու են այն օրենքի առջև, որոնք ընդունվում են հասարակական փոխհամաձայնության արդյունքում, իրացվում են իրավահավասարության հիմքով և ամրապնդվում են անկախ դատական համակարգի որոշմամբ՝ համապատասխանելով միջազգային իրավունքի նորմերին և համընդհանուր ճանաչում ունեցող մարդու հիմնարար իրավունքներին: Վերջինս իրավունքի գերակայության լիարժեք իրացման համար առանձնացնում էր իրավունքի գերակայության հետևյալ բաղադրիչները՝

- օրենքի առաջ բոլորի հավասարություն,
- օրենքի առջև պատասխանատվություն,
- արդարություն օրենքի կիրառման ժամանակ,
- իշխանությունների տարանջատում,
- հասարակության մասնակցությունը որոշումների ընդունման ընթացակարգին,
- կամայականության արգելքի ապահովման համար երաշխիքների ստեղծում,
- իրավական որոշակիություն,
- իրավական և ընթացակարգային թափանցիկության ապահովում³:

Իրավունքի գերակայության հասկացության վերաբերյալ առավել խորը մասնագիտական վերլուծությունները ձևակերպված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում: Դատարանի կողմից ընդունված նախադեպային որոշումներում շեշտը դրվում է ոչ թե իրավունքի գերակայություն տերմինի, այլ տերմինի բովանդակային պարզաբանման և հստակ չափորոշիչների սահմանման վրա: Դատարանի նախադեպային պրակտիկայում հստակ նշվում է, որ դեմոկրատական արժեքային համակարգում իրավունքի գերակայությունը դիտարկվում է որպես համընդհանուր սկզբունք անկախ նրանից՝ տերմինն ունի տվյալ պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտում հստակ ամրագրում, թե՞ ոչ⁴: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ իրավունքի գերակայությունը գտնվում է առավել բարձր հարթության վրա, և իրավակիրառ մարմինները պետք է առաջնորդվեն ոչ միայն սահմանադրություններում, օրենքներում ամրագրված բնական իրավունքի չափանիշներով, այլև՝ առաջնորդվեն համամարդկային արժեքներով՝ անկախ այն հանգամանքից՝ ամրագրված են, կամ ի՞նչ տեսքով են մեկնաբանվում իրավական ակտերում իրավունքի գերակայության հասկացությունը:

Իրավական համակարգում իրավունքի սկզբունքները կարող են նաև չունենալ իրավական ամրագրում, սակայն անկախ իրավական ամրագրման փաստից՝ իրավունքի գերակայության սկզբունքը ժամանակակից իրավական համակարգերում առկա է և գործող սկզբունք է, որը դրսևորվում է իրավաբանական գործողություններ իրականացնող սուբյեկտի իրավամտածողության արդյունքում: Ըստ Դայսիի՝ նորմատիվ իրավական ամրագրումը, որքան էլ օբյեկտիվ հիմքեր ունենա, միևնույն է՝ «իրավունքի գեկայության» սկզբունքը, կախված տվյալ պետության կառավարման ռեժիմից և գո-

¹ Տե՛ս առավել մանրամասն Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի CDL-AD(2011)003rev. գեկույցում էջ 3-5 [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2011\)003rev-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2011)003rev-e)

² “Верховенство закона и правосудие на переходном этапе в обществах в состоянии конфликта и пост-конфликтных обществах”. Доклад генерального секретаря, Doc. S/2004/616, 23 августа 2004 года.

³ “Верховенство закона и правосудие на переходном этапе в обществах в состоянии конфликта и пост-конфликтных обществах”. Доклад генерального секретаря, Doc. S/2004/616, 23 августа 2004 года, см. пункт 6.

⁴ Տե՛ս “Стеффорд (Stafford) против Соединенного Королевства”, ЕСПЧ, 28 мая 2008 года, կետ 63, ինչպես նաև “Филис (Philis) против Греции” (1991), Серия А № 209, կետ 59.

յություն ունեցող իրավական համակարգից, չի կարող արտահայտել իր ողջ բովանդակային էությունը¹: Իրավունքի գերակայության և արդի հասարակական համակարգերի համեմատական վերլուծությունը և արժեքաբանությունը հաստատում է այն, որ արդի իրավական համակարգը նախադրյալներ և երաշխիքներ է ստեղծում իրավունքի սկզբունքի ամբողջական գործարկման և լիարժեք իրականացման համար: Իրավունքի գերակայության սկզբունքը իրավական համակարգի երեք հիմնական օբյեկտների՝ անհատի, հասարակության և պետության միջև իրավական կարգավորման գործընթացներում միջնորդավորված օղակ է և կոչված է ստանձնելու վերոհիշյալ երեք օբյեկտների միջև հակակշռություն: Չնայած այս հանգամանքին՝ իրավունքի գերակայության սկզբունքի նշանակությունը իրավական համակարգի յուրաքանչյուր օբյեկտի համար նույնական չէ, քանզի թվարկված յուրաքանչյուր օբյեկտի համար իրավական պահանջը ունի տարբեր դրսևորում: Իրավունքի գերակայության սկզբունքը մեծ ազդեցություն ունի անհատի և հասարակության գոյության և գործողությունների վրա: Իրավունքի գերակայության սկզբունքի արդյունքում անհատը փոխակերպվում է իրավական էակի, իսկ հասարակությունը՝ իրավական հասարակության²: Պետության փոխակերպումը իրավականի ուղղակի կախված է անհատի և հասարակության փոխակերպումից, քանի որ իրավական էակներից կազմվում է իրավական հասարակություն, իսկ իրավական հասարակության իրավական պահանջումները ձևավորում են իրավական պետություն: Օրինակ՝ Վ. Մ. Հեսսենը գրում է. «Իրավական է այն պետությունը, որն իր գործունեության, կառավարման և դատական գործառնությունների իրականացման մեջ կապված և սահմանափակված է դրական իրավունքի հետ, ընկնում է իրավունքի տակ և ոչ թե դրանից դուրս կամ դրա վրա»³: Ինչպես արդեն նշվեց, «իրավունքի գերակայության» հասկացության վերաբերյալ արդի մոտեցումները շարադրված են բրիտանացի իրավագետ, պրոֆեսոր Ա. Վ. Դայսիի աշխատությունում⁴: Ըստ ժամանակակից տեսաբան Դայսիի իրավունքի գերակայության տեսության՝ իրավունքի գերակայությունն ունի երեք հիմնական հատկանիշներ՝ 1) պատիժ կարող է նշանակվել միայն հետադարձ ուժ չունեցող օրենքում հստակորեն որոշարկված դրույթների խախտման համար, որպեսզի հնարավոր լինի ուղղորդել մարդկանց գործողությունները և թույլ չտալ, որ նրանք պատժվեն հետահայաց (ռետրոսպեկտիվ) կարգով: Դայսիի կարծիքով հետահայաց լիազորությունները կարող են հանգեցնել կամայականության, 2) ոչ ոք չպետք է վեր լինի օրենքից, և հասարակության բոլոր խավերը պետք է հավասարապես ենթարկվեն օրենքին, 3) իրավունքի գերակայության գաղափարը պետք է ելնի ոչ թե գրված սահմանադրությունից, այլ ընդհանուր (նախադեպային) իրավունքից:

Վենետիկյան հանձնաժողովի գեկույցում նաև նշվում է, որ «ժամանակի ընթացքում մի շարք երկրներում իրավունքի գերակայության հասկացության էությունն աղավաղվել է, և այն համարվել է համարժեք «օրենքի հիման վրա կառավարելու» կամ «օրենքի գերակայություն», նույնիսկ՝ «օրենքի հիման վրա իրավունքներ» հասկացություններին»: Սակայն պետք է նշենք, որ «օրենքի գերակայություն» հասկացության համարժեքությունը «իրավունքի գերակայություն» հասկացությանը ոչ իրավաչափ է, քանի որ օրենքը, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերը/հրամանագրեր, որոշումներ, հրաման և այլն/ են իրավունքի արտահայտման ձևեր են, այդ հասկացությունները նույնականացնելը սխալ է: Իրավունքը կախված չէ պետության կամքից, իսկ օրենքը իրավունքի աղբյուրներից մեկն է:

¹ Տե՛ս Դայսի Ա., Основы государственного права Англии (Introduction to the study of the law of the constitution). Пер. О. В. Полтороцкой, под ред. П. Г. Виноградова. Изд. Л. Ф. Пантелеева. С.-Петербург, 1891, էջ 55

² Տե՛ս Ասատրյան Ա., Իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում: Ե., Հայրապետ հրատ., 2013, էջ 164

³ Տե՛ս Գեսսեն В., Возрождение естественного права. СПб, 1902, էջ 66

⁴ Իրավունքի գերակայության ժամանակակից հայեցակարգի հիմքերը մշակել է Ա. Դայսին իր 1885 թ. Հրապարակած «Սահմանադրական իրավունքի հետազոտման ներածություն» հիմնարար աշխատությունում: Տե՛ս ռուսերեն հրատարակությունը Դայսի Ա., Основы государственного права Англии (Introduction to the study of the law of the constitution). Пер. Полтороцкой О. В., под ред. Виноградова П. Г. С.-Петербург, 1891:

Իրավունքի և պետության տեսության ժամանակակից մոտեցումների հեղինակ, ինչպես նաև իրավական «օրենքի գերակայություն սկզբունքի» հայեցակարգի հիմնադիր, ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցն իրավագիտորեն նշում էր, որ օրենքի բովանդակությունը պետք է համապատասխանի հավասարության, ազատության և արդարության սկզբունքներին: Օրենքը պետք է գործի իրավական ձևերով և իրավունքին համապատասխան, որ «... օրենքը ոչ միայն իրավունքի ճանաչումն է, այլև դրա բանական սահմանափակումը»¹, իշխանության գործողությունների առջև սահման դնողը, կամայականություններն արգելակողը:

Այժմ փորձենք անդրադառնալ իրավունքի գերակայության՝ որպես համընդհանուր իրավական սկզբունքի հիմնախնդրին: Ինչ վերաբերվում է մասնագիտական գրականության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի իրավական դրսևորումների վերաբերյալ մոտեցումներին, ապա այն ևս խնդրահարույց է: Իրավունքի սկզբունքների տեսության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրված լինելը նույնպես վիճելի է: Արտասահմանյան մի շարք հեղինակների մոտեցումների համաձայն՝ Ա. Գ. Ինդիկ, Օ. Պ. Եգորչինա, Ռ. Ա. Ռոմաշով², Ա. Ն. Գոլովիստկով³, Վ. Ի. Լեուշին⁴/ իրավական ակտերում պետությունը իրավական ճանաչելու հանգամանքը դե ֆակտո հանգեցնում է իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրմանը, քանի որ իրավունքի գերակայության հաստատմամբ հասարակությունը վերածվում է ազատ, ինքնակառավարվող օբյեկտի, իսկ պետությունը և պետական կառավարում իրկանացնող իշխանությունը ենթարկվում է իրավունքի գերիշխանությանը:

Վ. Ներսեսյանցն իրավունքի գերակայության սկզբունքը համարում է իրավական պետության անբաժանելի հատկանիշներից մեկը, ըստ որի՝ պետությունը՝ որպես իրավաբանորեն կազմակերպված սուբյեկտ, պետք է գործի իրավական ձևերով և իրավունքին համապատասխան⁵:

Իրավունքի գերակայությունը, կազմելով իրավական պետության ողջ էությունը, ենթադրում է, որ

- մարդու իրավունքները՝ որպես սահմանադրորեն ճանաչված համամարդկային արժեքներ, միջազգային իրավական պրակտիկային համարժեք ձևով պետք է երաշխավորված և պաշտպանված լինեն,
- պետք է երաշխավորվի և ճանաչվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,
- նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, գերծ լինեն օրենսդրական կոլիզիաներից, բացերից և երկիմաստություններից,
- պետական մարմինների կողմից իրավունքների նկատմամբ ցանկացած միջամտություն պետք է բխի համաչափության սկզբունքից,
- արդարադատությունը պետք է լինի անկախ և անկողմնակալ,
- պետությունը պետք է կրի պրոպիտիվ պարտականություն, միաժամանակ ստանձնելով և՛ հանրային և՛ իրավական պատասխանատվություն,
- իշխանության իրացումը պետք է խարսխված լինի միմիայն հակակշիռների և զսպումների միաժամանակյա և ներդաշնակ գործառույթների և լիազորությունների վրա,
- օրինականության սկզբունքի վրա պետք է կառուցվի հանրային իշխանության իրացումը,

¹ Տե՛ս Ներսեսյանց Վ., Իրավունքի և պետության տեսություն: Ե., «Նաիրի», 2001, էջ 151- 153:

² Տե՛ս Ромашов Р., Индик А. Г., Егоршина О., Теория государства и права Санкт-Петербург 2002 г. էջ 628

³ Տե՛ս Головистикова А., Дмитриев Ю.А. Проблемы теории государства и права. М: Эксмо էջ 374-378

⁴ Տե՛ս Алексеев С., Дюрягин И.Я., Исаков В.Б., Корельский В., Леушин В., Перевалов В., Русинов Р., Черданцев А., Проблемы теории государства и права. учебник, под ред.: Алексеев С.С. 1987 Москва էջ 448

⁵ Տե՛ս Нерсесянц В., Общая теория права и государства. М., 2000, էջ 308; Халилов В.Ф. Энциклопедия власти. М., Академический проект, Культура, 2005, էջ 487

• պետք է երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը և հստակ ձևով սահմանվեն հանրային իշխանության մարմինների հայեցողական լիազորությունների սահմանները:

Սակայն քանի դեռ իրավունքի գերակայության սկզբունքի բաղադրիչները հստակ ձևակերպված չեն օրենքներում, ապա իրավունքի գերակայության սկզբունքի կիրառումը երաշխավորված չէ: Վերոթվարկված բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայության պարագայում միայն իրավունքի գերակայության սկզբունքը կարող է լիարժեք իրացվել: Քանի որ միայն իրավունքի գերակայություն տերմինի ամ-րագրումով չի կարող ապահովվել և երաշխավորվել իրավունքի գերակայության սկզբունքի լիարժեքությունը: Միևնույն ժամանակ, եթե իրավական ակտերում ամրագրված են իրավունքի գերակայության սկզբունքի բաղադրիչները, սակայն դատական իշխանության կողմից պատշաճ ձևով չի ապահովվում մարդու իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանություն, ապա այս դեպքում էլ կարող ենք ասել, որ իրավունքի գերակայության սկզբունքը լիարժեք չի գործում: Նման մոտեցումը բխում է նաև իրավունքի գերակայության վերաբերյալ ՄԱԿ-ի կողմից ընդունված «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի¹, Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2011)003 rev. զեկույցում ներկայացված պահանջներից²: Վենետիկյան հանձնաժողովի զեկույցի հեղինակները հանգում են հետևյալ եզրակացությանը. «Իրավունքի գերակայության գաղափարն իր իսկական իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության անբաժանելի մասն է, և վերջինիս համաձայն՝ որոշումներ ընդունող անձինք պարտավոր են հարգել բոլոր անձանց արժանապատվությունը և նրանց վերաբերվել հավասարության և բանականության սկզբունքներին և օրենքներին համապատասխան, ինչպես նաև բոլորը պետք է հնարավորություն ունենան անկախ և անաչառ դատարաններում վիճարկել որոշումների օրինականությունը արդար դատավարության միջոցով: Այսպիսով՝ իրավունքի գերակայությունը վերաբերում է իշխանության իրականացմանը և անհատի ու պետության փոխհարաբերություններին»³:

Իրավունքի գերակայության սկզբունքը ընկած է ժողովրդավարական իշխանության գործունեության կազմակերպման և ուղղորդման հիմքում, ընդհանուր և հիմնարար, համակարգաստեղծ իրավական սկզբունք է, որի համաձայն՝ պետական բոլոր մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են առաջնորդվել ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական համակարգում առկա և գործող իրավական օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ իրավունքի գերակայության սկզբունքը՝ հանդիսանալով համընդհանուր իրավական սկզբունք, տարածվում է իրավական համակարգի յուրաքանչյուր ոլորտում՝ ապահովելով պետության և հասարակության բնականոն զարգացումը: Ինչպես նաև իրավունքի գերակայության սկզբունքը գործում է իրավունքի բոլոր ոլորտներում, ապահովում է իրավունքի ձևավորումը, կիրառումը և զարգացումը: Իրավունքի գերակայության սկզբունքը, ապահովելով պետական իշխանության և իրավական համակարգի կայունությունը, բացառում է կամայական, արհեստածին, սուբյեկտիվ գործողությունների

իրականացումը՝ միաժամանակ երաշխավորելով իրավական և հասարակական գործընթացների անարգել և անցնցում իրականացումը:

Лиана Малхасян, Значение принципа верховного права в нынешней правовой системе,- Данная научная статья посвящена значению принципа верховенства права в современной правовой системе. В статье рассматриваются современные подходы концепции верховенства права, а так же проведен сравнительный анализ различий в современных

¹ A/67/L.1, 19 September 2012, http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/67/L.1.

² Վենետիկի հանձնաժողովի (CDL-AD(2011)003rev) 2011թ. ապրիլի 4-ին ընդունված բանաձև: Տե՛ս [http://concourt.am/armenian/news/doc/CDLAD\(2011\)003rev-e.pdf](http://concourt.am/armenian/news/doc/CDLAD(2011)003rev-e.pdf):

³ Տե՛ս «ՀՄԿ տեղեկագիր է 1(79)2016, էջ 17, առավել մանրամասն Տե՛ս Վենետիկյան հանձնաժողովի զեկույցը, էջ 6:

подходах. В статье наибольшее внимание было уделено понятиям правового государства и верховенства права, а также анализу понятий верховенства права и верховенства закона. Несмотря на то обстоятельство, что до сегодняшнего дня не достигнуто соглашение между участниками англосаксонской и романо-германской правовых систем относительно формирования принципа верховенства права и определения его компонентов, обобщая подходы авторов, обсужденных в статье, приходим к выводу, что принцип верховенства закона является общим и основным ориентиром демократического, правового и легитимного образа действий властей. Для полного функционирования принципа верховенства права необходимы гарантии, главным из которых является признание государства правовым. Обстоятельство признания государства правовым и его фиксирование как нормативно-правового уже предусматривают обеспечение конституцией, международными договорами, правовыми законами и другими нормативными правовыми актами гарантий руководства принципом верховенства права.

Ключевые слова: верховенство права, принцип верховенства права, правовое государство, верховенство закона, демократическая власть, права человека

Liana Malkhasyan, The role of the principle of the rule of law in modern legal system,- This scientific article is devoted to the significance of the principle of rule of law in current legal system. Modern approaches of the concept of the principle of rule of law are discussed in the article, the differences of modern approaches are analyzed comparatively. Much attention in the article is paid to the analysis of such concepts as legal state and rule of rights, rule of rights and rule of law. Despite the circumstance that till now there has been no consensus between the participants of Anglo-Saxon and Romano-Germanic legal systems concerning the formation of the principle of the rule of law and the definition of its components, generalizing the approaches of the authors discussed in the article, we come to the conclusion that the principle of rule of law is the general and basic guideline of a democratic, legal and legitimate government's activity. For the full functioning of the principle of rule of law guarantees are needed, the most important of which is recognizing the state as being legal. The circumstance of considering the state as legal and affirming it as normative and legal already imply provision of the guarantees of guidance with the principle of rule of law by the constitution, international agreements, legal laws and other normative legal acts.

Key words: rule of rights, the principle of rule of law, legal state, rule of law, democratic authority, human rights